Թիւնն իր իսկ կազմակերպուած բազկի մէջ պիտի որոնել՝ իսլամական Ծովի մէջ։ Եւ այդ բազուկն էր միայն, որ իսլամի ովկիանոսում փրկեց հայկական փոքրիկ մակոյկն այն ժամանակ, երբ մեզնից շատ ուժեղ ազգեր Ասիայի պատմաբեմից ընդմիշտ և անհետ հեռացան։

Բայց մի՞թէ պայքարելով մէկկաեղ նաև չենք բանակցել։ Մի՞թէ հայ ժողովուրդն այնքան է խելացնոր, որ զօտեմարտի մանի ամբողջ իսլամ աշխարհի հետ։ Մեր պայքարի ամենադաժան ժամին իսկ մենք բարեկամական ձեռք ենք մեկնել Թիւրքիային և պիտի մեկնենք, թէև փորձերը միշտ եղել են ապարդիւն և ապարդիւն էլ, հաւանօրէն, դեռ պիտի մնան, որովհետեւ Թիւրքիայի հետ լեզու գտնելու համար, նախ և առաջ, հզօր և յաղթական բազուկ պիտի գտնել։

Հ. Յ. Դաշնակցութիւնն այս քաղաքականութիւնն է ահա ունեցել իր երեսնամեայ պատմութեան ընթացքում ամէն անգամ, երբ Հայաստանի և հայ ժողովրդի վրա սկսել է սաւառնել Թիւրքիայի ուրուականը։

Հայ ազատագրութեան պատմութիւնից մի էջ միայն ձեզ պիտի յիշեցնեմ, որի հանդէպ ապագայ պատմագիրը կոյր հիացմունքի խօսք ունի ասելու, այդ ըմբոստ Զանգեզուրի Ազգային Խորհրդի պատասխանն է հզօր Բրիտանիայի ներկայացուցիչներին, երբ նրանք Բաքուի բրիտանական հրամանատարութեան կարգադրութեամբ ուզում էին զօրք մտցնել Զանգեզուր։

«Մենք գիտենք, պատասխանեց յատուկ գրութեամբ Ազգային Խորհուրդը, — որ ձեր յետևից Թիւրք բանակն է գալիս Զանգեզուր, այդ պատճառով դուք միայն մեր գիակների վրայով կարող էք մեր երկրի սահմանները կոխել. թող որ աշխարհը իմանայ, որ նաև Անգլիայի ձեռքով հայ ժողովրդի արիւնը հոսեց, մենք ձեզ կամովին մեր կեանքն ու հայրենիքը չենք յանձնի» (ծափեր)։ Այսպէս էր Ղարաբաղի հայ դիւղացիութեան կամքն ու վճիռն Անգլիայի ժամանակ ու բնական է, որ այդպէս պիտի լինի նաև այսօր, երբ այդ հողամասը մտնողն արդէն «բոլշևիկ» դարձած Թիւրքիան է (ծափեր)։ Բայց ամենից զաւեշտականն այն է, որ մեզ այսօր ռուսատեաց են անւանում։

Ի՞նչ էին ասում մեզ Ադրբէջանն ու Վրաստանը ամէն օր, ամէն տեղ. «Հ. Յ. Դաշնակցութիւնը ռուսասէր է, Ռուսաստանն է ուզում բերել Անդրկովկաս»։ Այսօր Դաշնակցութիւնը դարձել է ռուսատեաց, իսկ Ադրբէջանը՝ ռուսասէ՞ր...

Զէ՞ք զգում արդեօք, որ այս ծաղր ու հեգնանք է պատմութեան հասցէին։

Դուք, պարոնայք հակառակորդներ, լաւ լսեցէք, մենք ոչ ռուսատեաց ենք և ոչ ռուսասէր, ոչ թրքասէր ենք և ոչ թրքատեաց. մենք սիրում ենք հայ ժողովուրդը կոյր և մոլի սիրով, ամէն գնով պիտի պաշտպանենք նրա գոյութիւնը և պատրաստ ենք բանակցելու ամենքի հետ, ով հաշտւում է հայ ժողովրդի գոյութեան և նրա հայրենիքի անկախութեան հետ (ծափահարութիւն)։

Տարիների քաղաքականութի՞ւն էք արդեօք որոշում դուք այսօր, երբ հայ ժողովրդի գոյութեան խնդիրն է դրուած հրապարակի վրա. որոշեցէք ինչ կուզէք, բայց գիտցէք որ Ղարաբաղն ու Զանգեզուրը և այդպէս Հայաստանի ամէն մի հատուած գիտէ իր բախտը տնօրինել այնպէս, ինչպէս նրան իր առողջ բնազդն է հրահանգում։

Աստուածների, սրբութիւնների, գաղափարների ու դաւանանքների սրբապղծութիւնն է ամենուրեք։ Ո՞վ չէ «կարմիր» այսօր. ամենքը՝ և Նուրին, և Խալիլը, և Քեազիմը, և Քեմալը, և Սուլթանովը։ Պատմութեան